ԿԱՐԻՆԻ (ԷՐԶՐՈՒՄԻ) ՆԱՀԱՆԳԻ ԴԻԱԳԻՆԻ ԳԱՎԱՌԱԿԸ
(XIX դ. երկրորդ կես)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Թուրքական բռնատիրությունը պետական ծրագիր դարձրեց քրիստոնյա հպատակների ձուլման քաղաքականությունը: Օսմանիզմի դաղափարախոսությունը ձգտում էր հպատակների ուծացման ճանապարհով պահպանել «վաթանի» ամբողջականությունը՝ սրով նվաճված «հայրենիքը» պաշտպանել սրով: Քրիստոնյա հպատակներին ենթարկելով տնտեսական, քաղաքական ու կրոնական հալածանքների, թուրքական վարչակարգը համոզված էր, որ արևմտահայությանը այդ գեհենից դուրս գալու երկու ճանապարհ է մնում կամ ընդունել մահմեդականություն, կամ ենթարկվել գաղթի: Սակայն երբ Սան-Ստեֆանոյում և Բեռլինում բարձրացվեց Հայկական հարցը, արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ երկրորդն ընտրեց արևմտահայության բնաջնջման քաղաքականությունը: Ներկայացնելով 1895–1896 թթ. կոտորածները որպես հայ-քրդական ազգամիջյան բախումներ, բռնապետը լուծեց հայության խնդիրը, նրան զրկելով իր հայրենիքում ապրելու իրավունքից և հետաքրքրվող երկրներին ապակողմնորոշելու համար սկսեց կեղծել կատարվածը, միջազգային ասպարեզ նետեց իրականությանը չհամապատասխանող վիճակագրական տեղեկություններ, որոնք «ապացուցում» էին, որ հայերը կազմում են բնակչության չնչին հատվածը, որ կոտորածներին զոհ դարձած 300000 հայերի մասին խոսակցությունը չի համապատասխանում իրականությանը:

Թուրքական կեղծարարության բացահայտումը միշտ էլ գտնվել է հայ պատմագրության ուշադրության կենտրոնում: Սակայն այդ ընդհանուր գաշտի վրա թերի է մնում ժողովրդագրության բնագավառը, որը ճշմարտության բացահայտման կարևոր լծակներից մեկն է:

Ներկայացվող հոդվածը նպատակ ունի Կարինի Նահանգի Դիագինի գավառակի օրինակով ցույց տալ այդ հրեշավոր ծրագրի ազդեցությունը ժողովրդագրության փոփոխության վրա, ծրագիր, որի օգնությամբ հայաթափվեց Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը, այդ թվում նաև Դիագինի գավառակը:

Դիագինի գավառակը տարածքով համընկնում է պատմական Ծաղկոտն գավառին: Գավառակը հյուսիսում սահմանակից է Երևանի Նահանգին, հարավում՝ Վանի Նահանգին, արևելքում՝ Բայազետի գավառակին, արևմուտքում՝ Կարաքիլիսեի գավառակին: Գավառակով հոսում է Արածանին իր բազմաթիվ վտակներով, որոնք ոռոգում են Այաշկերտի գաշտի մաս կազմող Դիագինի դաշտը: Կարնեցին այս առթիվ գրում էր. «...աստի ելանէ մեծ մասն Եփրատայ, և քուքուրդ բազում, և գնացեալ ի մէջ դաշ-

տին, և լինի գետ մեծ և անհուն»[1]: Գավառակն ունի հիասքանչ բնություն, խոտավետ սարալանջեր, սառնորակ աղբյուրներ, ծառաստաններ: Ղ. Ինճիճյանը, նկարագրելով գավառակը, գրում էր. «Ի գարնանային ժամանակս առհասարակ չքնաղ վայելչությամբ զարդարի բիւրազգի երփներանգ ծաղկոց, որոյ վրա ի վաղ ժամանակաց անտի եղաւ անվանուն ծաղկոց»[2]:

Արածանու հմայիչ ձորը, որը նաև գետի հունն էր, Ա–Դոն նկարագրում է այսպես. «Լեռ քարերի վիթխարի ձուլվածքներ, չեչտակի բարձրանում են վեր, ինչպես պարիսպներ, մեջտեղ թողնելով մի անցք Եփրատի կոհակների համար. այդ ձուլված կողերը և՛ բարձր են և՛ գեղեցիկ և՛ տպավորիչ. կարծեք մարդկային ձեռքը հղկիչ գործիքներով հղկել է այդ քարափ պարիսպները»[3]:

Դիագինից 5–6 կմ հարավ գտնվում է բնական կամուրջը, որն ունի 21մ բարձրություն: Այն ծծմբակրաքարային ծագում ունի և հանդիսանում է դրանց միացության արդյունքը: Կամրջի տակով «գալարվող Եփրատը հմայք ու երկիւղ է ազդում»[4],– գրում էր Ա–Դոն: Կամրջի երկու կողմերում բխում են հանքային ջրեր: Կամրջից փոքր-ինչ վերև Գերմավն է՝ հանքային ջրերի ակունքը, որն ամռանը վեր է ածվում բազմամարդ բուժարանի:

Գավառակի հաջորդ հրաշալիքը Ուչքիլիսայի վանքն է: Այն գտնվում է Դիագինից 15 կմ հեռավորության վրա, Նպատ լեռան հյուսիսային լանջին: Բագավանի հինավուրց Ս. Հովհաննես վանքը կառուցված է եղել նախկին հեթանոսական տաճարի տեղում: Վանքում տեղի են ունեցել եկեղեցական ժողովներ, այնտեղ է օծվել Դանիել Սուրմալեցի կաթողիկոսը: Վանքը շրջապատված էր պարիսպներով, ուներ ընդարձակ կալվածքներ, ջրաղացներ, անասունների հոտեր և նախիրներ: Գավառակի բնակչությունը հիմնականում զբաղվում էր երկրագործությամբ ու անասնապահությամբ: Փոքր թիվ էին կազմում արհեստավորներն ու առևտրականները: Ա. Կոլյուբակինը հայտնում է, որ գավառակում եղել են 125 բնակավայրեր, որոնք ունեին 1583 տուն, դրանցից միայն 72 էր հայկական[5]: Նույն հեղինակն այնուհետև նշում է, որ գավառակն ունեցել է 36 գյուղ, 513 տուն, որից միայն 20 տունն էր հայկական[6]: Ալ. Երիցյանը գավառակում հաշվում է 16 գյուղ՝ 11-ը քրդական, 2-ը եզիդական, 2-ը հայկական, 1-ը խառը բնակչությամբ: Քրդերը ունեին 1598 տուն, եզիդները՝ 82, հայերը՝ 41 տուն, ընդամենը՝ 1728 տուն: Բնակչության քանակը 11028 էր, որից 10140-ը՝ քրդեր էին, 510-ը՝ եզիդներ, 378-ը՝ հայեր: Համաձայն հեղինակի

---

1 Հ. Կարնեցի. Տեղեկագիր Վերին հայոց. Վաղարշապատ, 1903, էջ 21:

2 Ղ. Ինճիճյան. Աշխարհագրություն չորից մասացն աշխարհի. հ. Ա. Վենետիկ, 1806, էջ 115:

3 Ա – Դ ո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 207:

4 Նույն տեղում:

5 А. Колюбакин. Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края. Тифлис, 1888, с. 280 – 281.

6 Նույն տեղում, էջ 254, 255:

դասակարգման, քրդերը կազմում էին բնակչության 92 տոկոսը, եզիդները 4,5, հայերը 3,5 տոկոսը[7]:

Վ. Քինեի վիճակագրությամբ, գավառակում ապրում էին 10706 մահմեդականներ, 364 չունչ հայեր, 88 չունչ այլազգիներ, ընդամենը 11158 չունչ բնակչություն[8]:

Կարինի առաջնորդարանի տեղեկությամբ, գավառակում կային 7 հայկական գյուղեր, որոնք ունեին 156 տուն, 1092 չունչ բնակչություն[9]: Հեղինակներից մեկի վկայությամբ, 1878 թ. գավառակն ուներ 78 բնակավայր, 1600 տուն, 12000 չունչ բնակչություն[10]:

1886 թ. գավառակն ունեցել է 1178 տուն, 11748 չունչ բնակչություն, 88 գյուղ, յուրաքանչյուր գյուղ ունեցել է 20 տուն, 133 չունչ բնակչություն, այսինքն ամեն տուն ունեցել է 6,6 չունչ բնակչություն: Նույն վաստաթղթում նշված է նաև, որ 1886 թ. գավառակն ունեցել է 73 գյուղ[11]: Տեսնում ենք, որ հավատ ընծայել այս իրարամերժ վկայություններից որևէ մեկին, հնարավոր չէ: Դ. Սրվանձտյանցը առանձին վիճակագրություն չի թողել գավառակի մասին: Սակայն նրա կազմած «Բայազետ և Ալաշկերտ» ցուցակում տեղ են գտել գավառակի 3 գյուղեր[12]:

Թերևս իրականությանը մոտ է Կարինի առաջնորդարանի տեղեկությունը, բայց այն էլ սահմանափակ է ներկայացնում թե՛ գյուղերի, թե՛ բնակչության քանակը: Ձեռքի տակ չունենալով առավել վստահելի վիճակագրական տեղեկություն, Կարինի առաջնորդարանի հաշվումները ընդունենք որպես միայն 7 գյուղերի մասին հիշատակություն և դիմենք միջինի տարբերակին: Հաշվարկի արդյունքում ունենում ենք 2969 բնակավայր, 1481 տուն, 44 գյուղ, 11874 չունչ բնակչություն, որից 31 գյուղ, 42 տուն, 611 չունչը հայեր:

Վ. Քինեից և Ա. Կոլյուբակինից կատարված մեջբերումները նաև ապացուցում են, որ պաշտոնական, անաչառ վիճակագրության բացակայության պայմաններում, հենվելով թուրք պաշտոնյաների կողմնակալ հաղորդումների վրա, ստեղծվում է իրականությանը չհամապատասխանող «վիճակագրություն», որը հաստատում էր պետական կեղծարարությունը, քողարկում ջարդերի և ուծացման քաղաքականությունը:

Գավառակի կենտրոնը Դիադին (Թիադին, Տիատին) գյուղաքաղաքն էր: Այն գտնվում էր Բայազետից արևմուտք, նրանից 38 կմ հեռավորության վրա, Արածանիի աջ ափին, Հ. Կարնեցու բնորոշմամբ «ի գլուխս դաշտին» Գռնավուկ[13]:

---

7 Ա լ. ե ր ի ց յ ա ն.– Թե Տաճկական Հայաստանում որքա՞ն հայ կա.– «Փորձ», 1880, №6–7, էջ 11:

8 Ա – Դ ո. նշվ. աշխ., էջ 236–237:

9 Նույն տեղում:

10 Տեղանունների բառարան (այսուհետև՝ ՏԲ). հ. 2, Երևան, 1988, էջ 97:

11 Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 476, ց. 1, գ. 180, թ. 61, 65:

12 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Թ. Ագատյանի ֆոնդ, գործ 23, թ. 11:

13 Հ. Կ ա ր ն ե ց ի. նշվ. աշխ., էջ 21:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ գյուղաքաղաքի անունը ծագել է Դիատուն բառից, որը կապված էր 371 թ. Ձիրավի ճակատամարտում զոհված հայ և հույն զիվորներին այդ վայրում թաղելու հետ: Այնուհետև նույն վայրում հիմնվում է բնակավայր և ստանում Դիադին անունը: Քաղաքը թեև գտնվում էր Տրապիզոն–Կարին առևտրական ճանապարհի վրա, բայց ակտիվ մասնակցություն չուներ առևտրական գործարքներին: Ճիշտ է, քաղաքում գործում էին 40–50 կրպակներ, սակայն դրանք նույնպես անմասն էին այդ ասպարեզից և բավարարում էին միայն տեղական պահանջները: Մինչև XIX դ. 20-ական թվականները քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը: Դարի երկրորդ կեսից իրավիճակը կտրուկ փոխվեց և արդեն 70-ական թվականներին Դիադինը կիսահայաթափված մի բնակավայր էր: 1894–1896 թթ. կոտորածներից հետո հայ ազգաբնակչությունը գրեթե վերացավ և նրանց տեղը զբաղեցրին մահմեդական տարբեր ցեղեր, խաթարվեց տնտեսական ու մշակութային բնականոն զարգացումը, ասպարեզից անհետացան բնիկ հայ ժողովրդի հոգևոր և մշակութային արժեքները:

Ղ. Ինճիճյանը վկայում է, որ XIX դ. սկզբներին գյուղաքաղաքն ունեցել է 500 տուն հայ և քուրդ բնակչություն[14]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ, 70–80 տարի անց, քաղաքում մնացել էր միայն 15 տուն հայություն[15]: Հեղինակներից մեկն էլ վստահեցնում է, որ 1880 թ. քաղաքն ուներ 80 տուն խառը բնակչություն[16]: Եթե, բացի Կարինի առաջնորդարանի տեղեկությունից, կիսենք տների քանակը, ապա միջինում կունենանք 103 տուն, 721 չունչ հայ բնակչություն: Համեմատություն կատարելով դարասկզբի և դրանից շուրջ 70 տարի հետո գոյություն ունեցող ցուցանիշների միջև, պարզվում է, որ եթե դարասկզբին հայերն ունեին 250 տուն, 1400 չունչ բնակչություն, ապա 70 տարի հետո 235 տնով, 1310 չնչով պակասել էր հայերի քանակը, ինչը արդյունքն էր տխրահռչակ օսմանիզմի քաղաքականության: Այս, գրեթե անհավատալի վիճակագրությունը ցույց է տալիս, թե թուրքական բռնատիրությունը ինչ արագությամբ էր իրականացնում հայաթափման գործընթացը: Եթե այս ամենին գումարենք նաև համիդյան կոտորածների պատճառած վնասները և կորուստները, պատկերը ավելի քան հստակ կլինի:

Գավառակի նշանավոր գյուղերից էր Կարաբազարը (Գարաբազար, Խարաբազար, Ղարաբազար): Այն գտնվում էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Ուչքիլիսայի Ս. Հովհաննես վանքի հարևանությամբ: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, կային նաև տեղական պահանջները բավարարող արհեստավորներ: Գյուղն ուներ Ա. Աստվածածին անունով գործող եկեղեցի, որի հասույթը կազմում էր 500 լիրա ներքին և 1000 լիրա պաշտոնեից հասույթ: Տրդատյան վարժարանն ուներ 500 լիրա հասույթ և 25 աշակերտ[17]:

---

14 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 115:
15 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գործ 23, թ. 11:
16 ՏԲ. հ. 2, էջ 973:
17 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գործ 23, թ. 11:

1877–1878 թթ. գյուղն ուներ 30 տուն բնակչություն[18]: Կարինի առաջնորդարանի վիճակագրությամբ գյուղի բնակչությունը 20 տուն էր[19]: Նույն վկայությունը հաստատում է նաև Գ. Սրվանձտյանցը[20]: Միջինում կունենանք՝ 23–24 տուն, 161–168 շունչ հայ բնակչություն: Համիդյան կոտորածներից հետո գյուղը գրեթե հայաթափվեց, ապա այնտեղ բնակություն հաստատեցին շրջակա գյուղերից գաղթած հայերը, որոնք էլ զոհ գնացին Մեծ եղեռնին:

Գումուլպուճախ (Ղումուլպուճախ, Ղումլիբուլաղ) գյուղը գտնվում էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Նպատ լեռան ստորոտում: Ս. Աստվածածին եկեղեցին գործող էր և ուներ 500 լիրա հասույթ: Խոսրովյան վարժարանի հասույթը կազմում էր 500 լիրա: Վարժարանում սովորում էր 30 աշակերտ: Գ. Սրվանձտյանցի վիճակագրությամբ գյուղն ուներ 24 տուն, 200 շունչ հայ բնակչություն[21]: Կարինի առաջնորդարանը վկայում է 35 տուն հայերի գոյության մասին[22]: Միջինում կունենանք՝ 32 տուն, 224 շունչ հայ բնակչություն:

Ջուլյան գյուղը տեղավորված էր Դիադինից հյուսիս-արևմուտք, Սեյտոն և Բուղայի քրդաբնակ գյուղերի հարևանությամբ: Գավառակի ամենահայաշատ գյուղն էր, ուներ 45 տուն բնակչություն[23]: Գ. Սրվանձտյանցի վիճակագրությամբ, գյուղն ունեցել է 29 տուն, 250 շունչ հայ և 120 շունչ քուրդ բնակչություն[24]: Միջինում կունենանք՝ 37 տուն, 249 շունչ հայ բնակչություն: Ս. Աստվածածին գործող եկեղեցին ուներ 1500 լիրայի ներքին և պաշտոնեից հասույթ: Սմբատյան վարժարանի հասույթը կազմում էր 500 լիրա, որը գոյանում էր հանգանակություններից: Վարժարանում սովորում էին 37 սաներ[25]:

Գավառակի նշանավոր հայաշատ գյուղերից էին նաև Ուչքիլիսան, Միրզաջանը, Աղբաձորը, Գորանին, Գմբեթը, Դավթին, Լեչկոն, Մարտիկը, Սորան:

Գավառակի հայ բնակչությունը, գտնվելով աննախադեպ հալածանքների ու կոտորածների, բռնի կրոնափոխման վտանգի առաջ, հետզհետե նվազել է: Վերցնենք թեկուզ Կարաբազար և Ջուլյան գյուղերի օրինակը: 1878–1912 թթ. ընկած ժամանակամիջոցում նշված գյուղերը փոխանակ բնական աճի շնորհիվ ավելացնեին բնակչության քանակը, ընդհակառակը, կրել են համապատասխանաբար 10 և 16 տների կորուստ: Այն դեպքում, երբ գրեթե 35 տարիների ընթացքում, բնական աճի շնորհիվ, նշված գյուղերը ունենալու էին առնվազն 12 տների աճ, որով բնակչության քանակը կհասներ 284-ի և 399-ի, տների քանակը 42-ի և 57-ի: Մինչդեռ նշված ժամանակահատվածում նույն գյուղերը տվել են 10 և 16 տան կո-

18 ՏԲ, հ. 2, էջ 973,
19 Ա – Դ ո. նշվ. աշխ., էջ 210:
20 ԳԱԹ, Թ. Ագաթյանի ֆոնդ, գործ 23, թ. 11:
21 Նույն տեղում:
22 Ա – Դ ո. նշվ. աշխ., էջ 210:
23 Նույն տեղում:
24 ԳԱԹ, Թ. Ագաթյանի ֆոնդ, գործ 23, թ. 11:
25 Նույն տեղում:

րուստ, ասել է՝ բնակչությունը համապատասխանաբար նվազել է 70 և 112 չնչով:

Նույն պատկերն էր տիրում նաև գավառակի մնացած գյուղերում: Եթե որևէ գյուղում նկատվել է անգամ աճ, ապա գա ոչ թե բնական աճի արդյունքն է, այլ ներգաղթողների:

Թուրքական բռնատիրությունը, օգտագործելով ընձեռված հնարավորությունը, իր վարած հայակուլ քաղաքականությունը կառուցելով մեծ տերությունների Հայկական հարցում տարաձայնությունների վրա, կարողացավ իրականացնել պատմական հայրենիքից արևմտահայության ոչնչացման ծրագիրը, այդ գործընթացի հաջողության մեջ տեսնելով նվաճված «վաթանի» ամբողջականության պահպանումը:

ДИАДИНСКИЙ УЕЗД КАРИНСКОЙ (ЭРЗРУМСКОЙ) ГУБЕРНИИ
(Вторая половина XIX в.)

ОВАНЕС ЗАТИКЯН

Р е з ю м е

В статье представляются историческое прошлое, экономическая и культурная жизнь, национальный состав Диадинского уезда, уточняется количество армянского населения, его роль в экономической жизни уезда, выясняется суть антиармянской политики Османской империи, которая играла решительную роль в сокращении количества армянского населения.

DIADIN DISTRICT OF KARIN (ERZURUM) PROVINCE
(The second half of the 19th century)

HOVHANNES ZATIKYAN

S u m m a r y

In the article the historical past, economic and cultural life, the national structure of Diadin district are represented. The amount of Armenian population, its role in economic life of the district is defined. The essence of the anti-Armenian policy of the Ottoman Empire, which played the decisive role in the reduction of the amount of Armenian population are presented.